Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (10 դասաժամ), տեխնոլոգիա (տղաների և աղջիկների խումբ՝ 3 դասաժամ), հայոց եկեղեցու պատմություն (4 դասաժամ), հասարակագիտություն (7 դասաժամ), ՆԶՊ (1 դրույք), մաթեմատիկա (10 դասաժամ), ֆիզկուլտուրա (12 դասաժամ), պատմություն (8 դասաժամ), կերպարվեստ (2 դասաժամ), երաժշտություն (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածներից կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկաեն թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. հունվարի 24-ից մինչև փետրվարի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16 :00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. փետրվարի 8-ին՝ ժամը14:00-ին,** ՀՀ Սյունիքի մարզի Խոզնավարի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Խոզնավար 1-ի փ. շ 4:

Տեղեկությունների համար զանգահարել 077037363 հեռախոսահամարով: